Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/2512/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

01 փետրվարի 2023թ. քաղաք Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «ԼԵՅԿՈ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 7-րդ կետը մասնակի, այն է՝ 44, 45 և 46 չափաբաժինների մասով «ԼԵՅԿՈ» ՍՊ ընկերությանը հաղթող ճանաչելու մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ԼԵՅԿՈ» ՍՊ ընկերությունը 2023թ. հունվարի 18-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 7-րդ կետը մասնակի, այն է՝ 44, 45 և 46 չափաբաժինների մասով «ԼԵՅԿՈ» ՍՊ ընկերությանը հաղթող ճանաչելու մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի (դատավոր Գ. Վարդանյան) 2023թ. հունվարի 24-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցադիմումի թերությունները վերացվել են և որոշումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում կրկին ներկայացվել է դատարան:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հետևաբար, հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2023թ. հունվարի 18-ին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԼԵՅԿՈ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 7-րդ կետը մասնակի, այն է՝ 44, 45 և 46 չափաբաժինների մասով «ԼԵՅԿՈ» ՍՊ ընկերությանը հաղթող ճանաչելու մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2023թ. հունվարի 18-ին:

Թիվ ԵԴ/2512/02/23 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023թ. մարտի 15-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ